

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

**0413.05.5 «ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ
ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

**0413.05.01.5 «ՄԵՆԵԶԵՐ` ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ»
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2016

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեսավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
		Քն.	Ստուգարք	Կուրսաշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս		
					Ընդամենը	Այդ թվում			3-ին կիս. 17 շաբ	4-րդ կիս. 16 շաբ.	5-րդ կիս. 15 շաբ.	6-րդ կիս. 13 շաբ.	7-րդ կիս. 11 շաբ.	8-րդ կիս 8 շաբ	
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		4տ		72	54	18		36	36					
2.	Տնտեսագիտության հիմունքներ		3տ		48	38	6	4	48						
3.	Զաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4տ		48	42		6		48					
4.	Իրավունքի հիմունքներ		3տ		36	28	8		36						
5.	Պատմություն		3տ		48	42		6	48						
6.	Ռուսաց լեզու		3տ		66	14	52		66						
7.	Օտար լեզու		3տ		66	12	54		66						
8.	Ֆիզկուլտուրա		3-8տ		160	10	150		34	32	30	26	22	16	
9.	Լանդշաֆտագիտության և Էկոլոգիայի հիմունքներ		3տ		36	22	14		36						
10.	Զաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4տ		28	24	4			28					
	ԸՆԴԱՄԵՆԸ				608	286	306	16	370	144	30	26	22	16	
2.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
1.	Հաղորդակցություն		3տ		36	12	24		36						
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		3տ		36	12	24		36						
3.	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		3տ		36	12	24		36						
	ԸՆԴԱՄԵՆԸ				108	36	72		108						
3.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ														
1.	Համակարգչային օպերատորություն		4տ		72	12	60		48	24					
2.	Ցուցադրության կազմակերպում MS PowerPoint		5տ		36	8	28				36				
3.	Տվյալների բանկ Microsoft Access		5տ		36	8	28				36				
4.	Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով - 1	8			180	46	134		32	30	30	30	34	24	
5.	Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով - 2	8			180	46	134		36	28	30	28	34	24	
6.	Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով - 3	8			108	24	84		18	18	36	36			

7.	Կիրառական տնտեսագիտություն և գործարար հմտություններ		4տ		120	36	84			120					
8.	Տուրիստական ինդուստրիա		8ստ		36	16	20							36	
9.	Մարքեթինգային հմտություններ		5տ		108	32	76			108					
10.	Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ		5տ		108	32	76			108					
11.	Աշխատավարձի կառավարում		6տ		108	26	82					108			
12.	Ղեկավարման հմտություն, հոգեբանություն և հյուրընկալության էթիկետ		5տ		90	24	66			90					
13.	Գործարար հաղորդակցման հմտություններ		4տ		72	20	52			72					
14.	Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում		8տ		72	28	44							72	
15.	Հաշվապահական հմտություններ		5տ		36	24	12			36					
16.	Ազգային, մշակութային և կրոնական առանձնահատկությունների ճանաչողություն		6ստ		36	24	12					36			
	ԸՆԴԱՄԵՆԸ				1398	406	992			134	292	510	238	68	156
4.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ														
1.	Հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների ճանաչողություն	4			140	58	82			140					
2.	Հիմնական ծառայությունների կազմակերպումը հյուրանոցային համալիրներում		6տ		200	56	144					200			
3.	Լրացուցիչ ծառայությունների կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում		8տ		108	34	74							108	
4.	Օժանդակ ծառայությունների կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում		7տ		72	24	48						72		
5.	Միջոցառումների (MICE) կազմակերպում և սպասարկում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում		7տ		180	54	126						180		
	ԸՆԴԱՄԵՆԸ				700	226	474			140		200	152	108	
5.	ԸՆՏՐՈՎԻ				54								54		
	ՊԱՅՈՒՄՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				12							4		8	
	ԸՆԴԱՄԵՆԸ									612	576	540	468	396	288
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
	Շաբաթվա ժամերի քանակը									36	36	36	36	36	36

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՅՐԱԺԵՃՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՅԵՏՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
1.	Վարվելակերպի հիմունքներ			1.	օտար լեզուների կաբինետ,
2.	Ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքներ			2.	ուսուցման տեխնիկական միջոցների կաբինետ,
				3.	ընդհանուր հումանիտար առարկաների կաբինետ,
				4.	տնտեսագիտական առարկաների կաբինետ
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5.	համակարգիչների կաբինետ,
1.	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցումը	4	6	6.	մեթոդական կաբինետ
2.	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	5,6,7,8	19	7.	գրոսաշրջության կաբինետ
3.	Նախավարտական, արտադրական պրակտիկա	8	8	8.	
4.				9.	
5.				10.	
6.				11.	
7.				12.	
	ԸՆԴԱՄԵՆԸ		33		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՏԱԿՈՐՈՒՄ Հունիսի 08-ից հուլիսի 05-ը ընկած ժամանակահատվածում չորս պետական քննություն հատուկ մասնագիտական մոդուլներից				1.	հյուրանոցային սեյնյակի և ընդունարանի մոդել (առկայության դեպքում)
				2.	
				3.	
				4.	
				ԱՐՅԵՏՍԱՆՈՑՆԵՐ	
				1.	
				2.	
				ՄԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԼԻ	
				1.	Մարզադահլիճ
				2.	Մարզաօդակայան

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային

Ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:

3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԴՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-16-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունակական գործընկերության համար:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների

	<p>ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է քննարկումների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p>

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿՆԵՐ	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հաստեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,

	<p>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
<p>Չնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 5</p>	<p>Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքում է անհրաժեշտ տեղեկատվություն,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՅ-ԱԱՕ-5-16-001
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ,

	4) ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ուսուցումները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել «Կենսագործունեության անվտանգության և աշխատանքի պաշտպանության» կաբինետում՝ ունենալով անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները

	<p>(սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</p> <p>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել «Կենսագործունեության անվտանգության և աշխատանքի պաշտպանության» կաբինետում՝ ունենալով անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումների բաղադրիչներ:</p>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել «Կենսագործունեության անվտանգության և աշխատանքի պաշտպանության» կաբինետում՝ ունենալով անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) տարբեր կտրվածքների դեպքում կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության գործողությունները:
Չնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել «Կենսագործունեության անվտանգության և աշխատանքի պաշտպանության» կաբինետում՝ ունենալով անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒԼԵՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-5-16-001
Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) փնտրի և գտնի աշխատանք, 2) հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ, 3) արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը, 4) ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, 2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, 3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), 4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, 5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:

Չնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել «Կենսագործունեության անվտանգության և աշխատանքի պաշտպանության» կաբինետում՝ ունենալով անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները, 2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը, 3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, 4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ, 5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:
Չնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցումը</p>

ռեսուրսները	անհրաժեշտ է իրականացնել «Կենսագործունեության անվտանգության և աշխատանքի պաշտպանության» կաբինետում՝ ունենալով անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը, 2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները, 3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման, 4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, 5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումների բաղադրիչներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել «Կենսագործունեության անվտանգության և աշխատանքի պաշտպանության» կաբինետում՝ ունենալով անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել «Կենսագործունեության անվտանգության և աշխատանքի պաշտպանության» կաբինետում՝ ունենալով անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, կյուբեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, կյուբեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕԴԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը	ՍԿՀԶՀ-5-16-001
Մոդուլի նպատակը	Ձարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 60 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը, 2) խմբագրի տեքստեր և ֆորմատավորի, 3) պատրաստի աղյուսակներ և խմբագրի, 4) խմբագրի և նկարազարդի գրաֆիկական օբյեկտները, 5) կառուցի excel ծրագրով աղյուսակներ, մուտքագրի, ֆորմատավորի, ստեղծի բանաձևեր և խմբագրի, 6) կարողանա աշխատի համացանցում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն), 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),

	<p>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է Նոր թղթապանակ ու ֆայլ, բացում, պահպանում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպում (Print):</p>
Քնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային և գործնական հանձնարարությունների միջոցով:</p> <p>Չարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, Windows օպերացիոն համակարգի պատուհանի կառուցվածքի, կիրառվող հիմնական ծրագրերի վերաբերյալ հարցեր:</p> <p>Թեստերում ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը:</p> <p>Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են ուսանողի առաջարկվող մեթոդների միջոցով համակարգչի աշխատելու սկզբնական քայլերը, պատուհանային մենյուի հիմնական հրամանների օգտագործման, Նոր թղթապանակի ու ֆայլի ստեղծման, պահպանման և տեղադրման, առաջադրված փաստաթղթի տպման կարողությունները:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <ul style="list-style-type: none"> - Չամակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչները, - Windows օպերացիոն համակարգի պատուհանի կառուցվածքը, - Նոր թղթապանակի ու ֆայլի ստեղծում, պահպանում, փակում և տեղադրում առաջադրված վայրում: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային և գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային

	<p>տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:</p>
Չնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային և գործնական հանձնարարությունների միջոցով: Զարգաչարերում և թեստերում ընդգրկված են լինելու MS Word ծրագրի պատուհանի հիմնական հրամանների, հայերեն և օտար լեզվով տեքստի մուտքագրման, պարզագույն ֆորմատավորման և նկարների, գրաֆիկների, աղյուսակների ներմուծման վերաբերյալ հարցեր: Թեստերում ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը:</p> <p>Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են ուսանողի առաջարկվող մեթոդների միջոցով MS Word ծրագրի հետ աշխատելու սկզբնական քայլերը, հայերեն և օտար լեզվով տեքստի մուտքագրման, տողերի դասավորության, միջտողային տարածությունների, տեքստի գունային ֆոնի, պարբերության խորությունների լուսանցքների, տեքստին կից նկարների, գրաֆիկների, աղյուսակների ներմուծման կարողությունները:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <ul style="list-style-type: none"> - Զայերեն և օտար լեզվով տեքստի մուտքագրումը, - Մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորումը, - Տեքստին կից նկարների, գրաֆիկների, աղյուսակների ներմուծումը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային և գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաչարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Աղյուսակների պատրաստում և խմբագրում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստում դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն), 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջև:

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային և գործնական հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու առաջադրված չափերով աղյուսակների կառուցման, տվյալներ մուտքագրման, վերաբերյալ հարցեր: Թեստերում ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը:</p> <p>Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են ուսանողին առաջարկվող մեթոդների միջոցով առաջադրված չափերով աղյուսակի կառուցման, տվյալների մուտքագրման, աղյուսակի տողերի, սյուների կարողությունները:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ`</p> <ul style="list-style-type: none"> - Առաջադրված չափերով աղյուսակի կազմում և մուտքագրում, - Ուղղումներ ու լրացումներ աղյուսակում; <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային և գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Գրաֆիկական խմբագրում և նկարագրողում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ` օգտագործելով Autoshapec պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները` տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային և գործնական հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու գրաֆիկական օբյեկտների, կանոնավոր պատկերների, տեքստային բլոկների գծագրման, ֆորմատավորման, խմբավորման վերաբերյալ հարցեր: Թեստերում ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը:</p> <p>Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են ուսանողին առաջարկվող մեթոդների միջոցով Autoshapec պատուհանի</p>

	<p>պատրաստի ձևերից գրաֆիկական օբյեկտների, կանոնավոր պատկերների, տեքստային բլոկների գծագրման, ֆորմատավորման, գունաերանգավորման կարողությունները:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - Գրաֆիկական օբյեկտների, կանոնավոր պատկերների, տեքստային բլոկների գծագրում, - Գրաֆիկական օբյեկտների ֆորմատավորումը, գունաերանգավորում: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային և գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պատասաններ, տեսանյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Excel ծրագրով աղյուսակների կառուցում, մուտքագրում, ֆորմատավորում, բանաձևերի ստեղծում և խմբագրում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ծրագրի հիմնական պատուհանը. մենյուի տող, գործիքների տող, բանաձևերի տող, տողերի և սյուների համարակալումներ, աշխատանքային տարածք (թուղթ), թերթ (Worksheet), ինֆորմացիոն տող, էջատար սլաքներ (Scroll Bar), 2) կատարում է գործողություններ էջերի (Sheet) հետ՝ ավելացում, անվանափոխում, կրկնօրինակում, տեղափոխում, կոդավորում, գունավորում, պահպանում, թաքցնում, (Insert, Delete, Rename, Move or Copy..., View Code, Tab Color, Hide), 3) գիտի վանդակի հասցեի նշանակությունը և կատարում տվյալների ավտոմատ լրացում, խմբագրում և ֆորմատավորում (Format cells), թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաներ, 4) կատարում է բանաձևերի ստեղծում, պատճենում, հաշվարկներ տարբեր կապերի կիրառմամբ, տրամաբանական, մաթեմատիկական և ստատիկ ֆունկցիաներ (Sum, Min, Max, Average, Count), 5) կատարում է գրաֆիկական օբյեկտների տեղադրում և դիագրամների կառուցում, 6) կատարում է տվյալների դասավորում, ֆիլտրում և տպագրում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային և գործնական հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու MS Excel ծրագրի պատուհանի հիմնական հրամանների, էջերի (Sheet) կարգավորման, վանդակի հասցեի նշանակության, տվյալների մուտքագրման, ֆորմատավորման, օբյեկտների տեղադրման և դիագրամների կառուցման վերաբերյալ հարցեր: Թեստերում ուսանողն ընտրելու է չորս պատասխանից մեկ ճիշտը:</p>

Ուսումնառության արդյունք 2	<p>Տիրապետել կառավարման համակարգի տարրերին և կառավարման ենթակա բաղադրիչներին</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կառավարման համակարգի տարրերը, 2) ներկայացնում է կառավարման ենթակա բաղադրիչները (արտադրության, անձնակազմի, ֆինանսների, շուկային, ստորաբաժանումների, ոլորտների, նորամուծությունների, կոնֆլիկտների և այլն), 3) ներկայացնում է կառավարման ենթակա հիմնական բաղադրիչների առանձնահատկությունները, 4) կատարում է հիմնական բաղադրիչների ընտրություն և հիմնավորում դրանք՝ ըստ կազմակերպության առաջադրված նպատակի:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել կառավարման համակարգի տարրերը, և կառավարման ենթակա բաղադրիչները, դրանց առանձնահատկությունները: Կառաջադրվի որոշակի պայմանական կազմակերպության նպատակներից և խնդիրներից ելնելով ընտրել կառավարման ենթակա բաղադրիչները և հիմնավորել ընտրված տարբերակների նպատակահարմարությունը:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - կառավարման համակարգի տարրերը, - կառավարման ենթակա բաղադրիչները (արտադրության, անձնակազմի, ֆինանսների, շուկային, ստորաբաժանումների, ոլորտների,

	<p>Նորամուծությունների, կոնֆլիկտների և այլն),</p> <p>- հիմնական բաղադրիչների ընտրություն և հիմնավորում դրանց՝ ըստ կազմակերպության առաջադրված նպատակի:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կատարել կառավարման հիմնական գործընթացները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է արտադրության (կազմակերպության) կառավարման հիմնական գործընթացները, 2) ներկայացնում է «պլանավորում» գործընթացի փուլերը՝ ըստ գործողությունների, 3) սահմանում է նպատակ և պլանավորում դրա կատարման գործողությունները, 4) ներկայացնում է «կազմակերպում» գործընթացի փուլերը՝ ըստ գործողությունների, 5) ներկայացնում է անձնակազմի շահադրժման (մոտիվացման) ձևերը, 6) կազմակերպում է պլանավորված գործողությունների կատարումը, 7) ներկայացնում է «վերահսկողություն» գործընթացի փուլերը՝ ըստ գործողությունների, 8) իրականացնում է հանձնարարականի կամ որոշման վերահսկողություն՝ բոլոր բաղադրիչներում և փուլերում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել կազմակերպության կառավարման հիմնական գործընթացները և նկարագրել դրանցից յուրաքանչյուրի փուլերը: Կառաջադրվի որոշակի պայմանական կազմակերպության պայմանական նպատակ կամ առաջադրանք լուծելու համար կանխատեսել և պլանավորել գործողությունները, կազմակերպել և հրահանգավորել համապատասխան ստորաբաժանումներին կամ պատասխանատու անձանց, մոտիվացնել աշխատակիցներին և իրականացնել նախնական, ընթացիկ և ամփոփիչ վերահսկողություն: Վերլուծել և գնահատել արդյունքները:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <ul style="list-style-type: none"> - արտադրության (կազմակերպության) կառավարման հիմնական գործընթացները, - «պլանավորում» գործընթացի փուլերը՝ ըստ գործողությունների,

	<p>- նպատակ և պլանավորում , կատարման գործողությունները, -«կազմակերպում» գործընթացի փուլերը՝ ըստ գործողությունների, -«վերահսկողություն» գործընթացի փուլերը՝ ըստ գործողությունների: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Կազմակերպել ստորաբաժանումների միջև (միջկառույցային) հաղորդակցում՝ ըստ պլանավորված նպատակի</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է միջկառույցային (ստորաբաժանումների միջև) հաղորդակցման եռությունը և բաղադրիչները, 2) ճիշտ է կազմակերպում տեղեկատվության փոխանակումը և հանձնառությունների բաշխում՝ ըստ ստորաբաժանումների, 3) ապահովում է հանձնառության հասանելիությունն ու մատչելիությունը «թիմային ստորաբաժանումների» միջև, 4) կատարում է ստորաբաժանումներից ստացված տեղեկությունների հավաքագրում, վերլուծություն:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել կազմակերպության կառավարման հիմնական գործընթացների կազմակերպման նպատակով համապատասխան ստորաբաժանումների միջև հաղորդակցման անհրաժեշտությունը և ազդեցությունը արդյունավետության վրա: Կառաջադրվի որոշակի պայմանական կազմակերպության պայմանական առաջադրանք, որի կատարումը ապահովելու համար ուսանողը փոխանցում է խնդիրը կամ ձևակերպված հանձնարարությունը, բաշխում է հանձնառությունները՝ ըստ պատասխանատուների, հավաստիանում դրանց ճշգրիտ հասանելիության և մատչելիության մեջ, սահմանված ժամկետում հավաքագրում կատարողականները և վերլուծում դրանք:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - միջկառույցային (ստորաբաժանումների միջև) հաղորդակցման եռությունը և բաղադրիչները, - տեղեկատվության փոխանակումը և հանձնառությունների բաշխում՝ ըստ ստորաբաժանումների, - հանձնառության հասանելիությունն ու մատչելիությունը «թիմային ստորաբաժանումների» միջև: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում</p>

	կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կիրառել ինքնակառավարման հմտությունները գործնականում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պատկերացնում «ինքնակառավարում» հասկացությունը, ինքնակառավարման համակարգի ուղղությունները, 2) օգտագործում է իր ժամանակային ռեսուրսները նպատակներին հասնելու համար, 3) կիրառում է անձնական աշխատանքի տեխնիկայի հմտությունները, 4) կիրառում է ղեկավարի աշխատանքի նորմավորման մեթոդները, 5) պլանավորում է ժամանակային ռեսուրսների օգտագործման վերահսկողությունը, 6) վերլուծում է իր աշխատանքային ժամերի ծախսերը կրճատելով ժամանակի կորուստները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողին կառաջադրվի պայմանական իրավիճակ, որի ժամանակ ուսանողը ցուցաբերում է ինքնակառավարման դրսևորումներ՝ կարողանալով պլանավորել իր ժամանակը, հանձնարարությունների կատարման հաջորդականությունը, մշակում է իր աշխատանքի տեխնիկան, նորմավորում աշխատանքը, նվազեցնում ժամանակային և աշխատանքային արդյունքների կորստի (ռիսկի) հավանականությունը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - «ինքնակառավարում» հասկացությունը, ինքնակառավարման համակարգի ուղղությունները, - ժամանակային ռեսուրսները՝ նպատակներին հասնելու համար, - ղեկավարի աշխատանքի նորմավորման մեթոդները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված	գործնական աշխատանք՝ 16 ժամ

Ժամաքանակը	
ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅԱՆ արդյունք 6	Կառավարչական որոշումներ ընդունելու հիմնական փուլերը
Կատարման չափանիշներ	1) կարողանում է ընդունել կառավարչական որոշումներ՝ օգտագործելով կառավարման հաղորդակցման արդյունքները, 2) մշտադիտարկում է ընդունված որոշումների կատարումը, 3) ապահովում է ընդունված որոշումների կատարումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողին կառաջադրվի պայմանական իրավիճակ, որի ժամանակ ուսանողը հիմք ընդունելով կառավարման գործընթացներից բխող հաղորդակցման արդյունքները (մասնավորապես՝ վերահսկողության տվյալներով), սահմանում է նոր գործողություն և դրա վերաբերյալ կայացնում կառավարչական որոշում և ապահովում դրա կատարումը՝ պարբերաբար դիտարկելով կատարման ընթացքը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - կառավարչական որոշումների ընդունում՝ օգտագործելով կառավարման հաղորդակցման արդյունքները, - ընդունված որոշումների կատարումը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՍԿՅԶՅ-5-16-011
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել աշխատատեղերի սահմանման և համլրման գործընթացների վերաբերյալ պատկերացումները, հմտացնել աշխատանքային պլանավորման և աշխատակազմի աշխատանքների, խմբային աշխատանքների կազմակերպման և համակարգման ունակությունները, բարձրացնել աշխատակազմի աշխատանքների վերահսկողության, գնահատման և մասնագիտական կարողությունների կատարելագործման գործնական կարողությունները:
Մոդուլի տևողությունը	108 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 26 ժամ

	գործնական աշխատանք՝ 82 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնառած լինի ՍԿՅԶԳ-5-16-007 «Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) տիրապետի աշխատատեղերի պլանավորման, սահմանման և համալրման մեխանիզմներին, 2) կատարի կադրերի ընտրություն, համալրում, 3) մշակի աշխատանքային պլան և կատարել ֆունկցիոնալ բաշխում, 4) իրականացնի ստորաբաժանման աշխատակազմի աշխատանքների համակարգում և վերահսկողություն, 5) կազմակերպի խմբային աշխատանքներ, 6) կատարի կադրերի կատարելագործման և նորամուծությունների ներդրում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել աշխատատեղերի պլանավորման, սահմանման և համալրման մեխանիզմներին
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աշխատատեղերի պլանավորման սկզբունքները՝ հիմք ընդունելով կազմակերպության նպատակները, 2) ներկայացնում է կազմակերպության կառուցվածքը և ենթահամակարգերում հաստիքների սահմանման հիմնական սկզբունքները, 3) կազմում է համապատասխան աշխատատեղերի պաշտոնի նկարագիրը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել աշխատատեղի պլանավորման, կազմակերպության կառուցվածքի և ենթահամակարգերի անհրաժեշտ հաստիքների սահմանման նախապայմանները, հիմքերը: Ուսանողին կառաջադրվի նորաստեղծ պայմանական կազմակերպության, ստորաբաժանման կամ կարճաժամկետ միջոցառման համար պլանավորել աշխատատեղեր (այդ թվում՝ կարճաժամկետ գործարքային)՝ ապահովելով նպատակի իրագործումը, կազմել հաստիքների կամ կարճաժամկետ գործարքային աշխատողների ցանկը ըստ ենթակայության, սահմանել նրանց աշխատանքի նկարագիրը:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - աշխատատեղերի պլանավորման սկզբունքները՝ հիմք ընդունելով կազմակերպության նպատակները, - կազմակերպության կառուցվածքը և ենթահամակարգերում հաստիքների սահմանման հիմնական սկզբունքները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյուլթեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել կադրերի ընտրություն, համալրում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Ներկայացնում է աշխատատեղի թեկնածուի(ների) որոնման տարբերակները, 2) անցկացնում է հարցազրույց՝ ապահովելով հստակ և նպատակային հարցադրումներ, 3) հիմնավորում է թեկնածուի (ների) ընտրության իր տարբերակը՝ ըստ գիտելիքների և կարողության (պոտենցիալի), 4) կազմակերպում է նորանշանակ կադրի ընդունելությունը, ուղղորդումը և փորձաշրջանը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել աշխատատեղին համապատասխան թեկնածուի որոնման տարբերակները, թեկնածուների ընտրության եղանակները, հարցազրույցի կազմակերպման ձևաչափերը, ընտրության հավանական չափանիշները, կադրերի ընդունելությունը և կատարելագործումը: Կառաջադրվի դերային խաղ՝ որի ընթացքում ուսանողը կկատարի պայմանական թափուր աշխատատեղի համար մրցույթ հայտարարելու, թեկնածուներին համալրելու, հարցազրույց անցկացնելու, կադր ընտրելու և պայմանագրային հարաբերության մեջ մտնելու, նրան աշխատանքում ուղղորդելու և կատարելագործելու գործողություններ:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - աշխատատեղի թեկնածուի(ների) որոնման տարբերակները, - թեկնածուի (ների) ընտրության իր տարբերակը՝ ըստ գիտելիքների և կարողության (պոտենցիալի), - նորանշանակ կադրի ընդունելությունը, ուղղորդումը և փորձաշրջանը: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյուլթեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ

ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅԱՆ արդյունք 3	Մշակել աշխատանքային պլան և կատարել ֆունկցիոնալ բաշխում
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ստորաբաժանման աշխատանքային պլանի նպատակները, կառուցվածքը և դա կազմելու մոտեցումները, 2) կազմում է առաջադրված աշխատանքային պլան՝ համաձայն ընդունված չափանիշների, 3) կատարում է աշխատանքի բաժանում՝ հաշվի առնելով աշխատակցի լիազորություններն ու ունակությունները
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողին կառաջադրվի կազմել ստորաբաժանման որոշակի խնդիրն կամ ծրագրին միտված աշխատանքային պլան՝ պահպանելով բաղադրիչները, ըստ լիազորությունների աշխատակիցների միջև կատարել աշխատանքի բաժանում և ապահովել աշխատանքային պայմանական խնդրի կատարումը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - աշխատանքային պլան՝ համաձայն ընդունված չափանիշների, - աշխատանքի բաժանում՝ հաշվի առնելով աշխատակցի լիազորություններն ու ունակությունները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅԱՆ արդյունք 4	Իրականացնել ստորաբաժանման աշխատակազմի աշխատանքների համակարգում և վերահսկողություն
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հրահանգավորման հիմքերը և մեխանիզմները, 2) կատարում է նպատակային հանձնարարում և նախնական վերահսկողություն, 3) կատարում է ընթացիկ և ամփոփիչ վերահսկողություն, 4) ամփոփիչ վերահսկողության արդյունքների վերլուծության հիման վրա գնահատում է աշխատանքի կատարողականը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և իրավիճակային խնդիրների միջոցով: Ուսանողին կառաջադրվի պայմանական հանձնարարության կատարման համար, ըստ հասցեատերերի կազմել հրահանգ՝ ապահովելով դրա

	<p>հիմնավորվածությունը և հավաստիանալ, որ հրահանգը հասկանալի և ամբողջական է (նախնական վերահսկողություն), հանձնարարությունից ելնելով, անհրաժեշտ և խելամիտ պարբերականությամբ ցուցաբերում է հետևողականություն (ընթացիկ վերահսկողություն), հանձնարարականին համապատասխան ստանում է վերջնական արդյունքներ (ամփոփիչ վերահսկողություն), վերլուծում ամբողջական տվյալները (արդյունքերը) և գնահատում դրանք:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - հրահանգավորման հիմքերը և մեխանիզմները, - ընթացիկ և ամփոփիչ վերահսկողություն: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Կազմակերպել խմբային աշխատանքներ</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է առանձնացնում խմբերի տեսակները՝ առաջադրված չափանիշով, 2) կարողանում է ապահովել խմբային նպատակների համապատասխանությունը կազմակերպության գործունեության նպատակներին, 3) իրականացնում է աշխատանքների բաշխումը, 4) նկարագրում է հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են խմբի էֆեկտիվ աշխատանքը, 5) առանձնացնում է անհրաժեշտ ռեսուրսները և բաշխում ըստ հանձնառությունների, 6) կարողանում է վերլուծել կոնկրետ խնդիր կատարելուց ստացված արդյունքները, 7) կարողանում է գնահատել ստացված արդյունքները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կառաջադրվի դերային խաղ սահմանել պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը կազմակերպության նպատակներից ելնելով</p>

	<p>կազմակերպում է խմբային աշխատանք, կատարում աշխատանքի բաժանում՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները, կատարում է ռեսուրսների (այդ թվում՝ մարդկային) համալրումներ և վերադասավորումներ: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել պայմանական տվյալ իրավիճակից ելնող թիմային աշխատանքի արդյունավետության չափման և գնահատման հիմնավորումները (չափանիշները): Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - խմբերի տեսակները՝ առաջադրված չափանիշով, - աշխատանքների բաշխումը, - հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են խմբի էֆեկտիվ աշխատանքը, - անհրաժեշտ ռեսուրսները և բաշխումն ըստ հանձնառությունների, - ստացված արդյունքների գնահատելը: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 6	<p>Կատարել կադրերի կատարելագործման և նորամուծությունների ներդրում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կադրերի կատարելագործման անհրաժեշտությունը, 2) ներկայացնում է կադրերի կատարելագործման եղանակները, խնդիրները, 3) մշակում է վերապատրաստման ծրագիր՝ առաջադրված խնդրի հաղթահարման նպատակով, 4) մշակում է աշխատակազմի արդյունավետ աշխատանքի նորարարական առաջարկ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել կադրերի կատարելագործման էությունը, դրա անհրաժեշտությունն ու ազդեցությունը կազմակերպության ընդհանուր նպատակների և իր առաջնության հարցում: Կառաջադրվի իրավիճակային խնդիր և կհանձնարարվի դրան համապատասխան մշակել վերապատրաստման ծրագիր և հիմնավորել դրա արդարացվածությունը: Որպես իրավիճակ կարող է լինել որշակի նորամուծությունը, կադրային հոսունությունը, օրենսդրական պահանջը, մրցակցունակության հաղթահարումը և այլն:</p>

	<p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <ul style="list-style-type: none"> - կադրերի կատարելագործման եղանակները, խնդիրները, - վերապատրաստման ծրագիր՝ առաջադրված խնդրի հաղթահարման նպատակով, - աշխատակազմի արդյունավետ աշխատանքի նորարարական առաջարկ: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային և գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԵՏ»	
Մոդուլի դասիչը	ՍԿՀԶՀ-5-16-0012
Մոդուլի նպատակը	Սովորողին տալ գիտելիքներ ղեկավարման տեսակների, ոճերի, առաջնորդելու հիմունքների և իշխանության ձևերի վերաբերյալ, ձևավորել գիտելիքներ՝ հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների բոլոր ծառայությունների աշխատողների վարվեցողության կանոնների, աշխատանքի կուլտուրայի, հյուրընկալության մթնոլորտի, Էթիկայի և սպասարկման հոգեբանության հիմունքների վերաբերյալ, զարգացնել որակյալ սպասարկում կազմակերպելու, հյուրընկալության մթնոլորտ ստեղծելու և աշխատողի արտաքին տեսքին ներկայացվող պահանջների պահպանությունը վերահսկելու կարողությունները:
Մոդուլի տևողությունը	90 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 66 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնառած լինի ՍԿՀԶՀ-5-16-007 «Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի ղեկավարման տեսակները և ոճերը, առաջնորդելու հիմունքները և իշխանության ձևերը, 2) կիրառի ղեկավարման էթիկայի և գործարար հարաբերությունների վարվելակերպի կանոնները, 3) ներկայացնի մասնագիտական էթիկայի և սպասարկման հոգեբանության հիմունքներն ու սկզբունքները,

	<p>4) ներկայացնի հյուրանոցի աշխատողի արտաքին տեսքին ներկայացվող պահանջները, անձնակազմի համազգեստը կրելու կանոնները,</p> <p>5) ստեղծի հյուրընկալության մթնոլորտ,</p> <p>6) կառավարի էթիկական կոնֆլիկտների և տարբեր հոգեվիճակների ու զգացմունքների դրսևորումները:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ղեկավարման տեսակները և ոճերը, առաջնորդելու հիմունքները և իշխանության ձևերը
Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է գործնականում ներկայացնել ղեկավարման տեսակները և ոճերը,</p> <p>2) նկարագրում է իշխանության ձևերը,</p> <p>3) բացատրում է ղեկավարման իր քայլերը՝ աշխատակազմի հետ աշխատանքները պլանավորելու և առաջնորդումը զարգացնելու գործում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել ղեկավարման տեսակները, ոճերը, իշխանության ձևերը և դրանցից իր նախապատվությունները: Դերային խաղի միջոցով կառաջադրվի ցուցադրել ղեկավարման տարբեր ոճեր և տեսակներ՝ նույն խնդիրը լուծելու ընթացքում: Կառաջադրվի հանդես գալ որպես պայմանական ստորաբաժանման ղեկավար և ազդել (կատարել իր պարտականությունները) աշխատակազմի վրա՝ կոնկրետ խնդիր կարգավորելու համար:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - ղեկավարման տեսակները և ոճերը, - իշխանության ձևերը, - ղեկավարման քայլերն աշխատակազմի հետ աշխատանքները պլանավորելու և առաջնորդումը զարգացնելու գործում: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ

ՈՒՏՈՒՄՆԱԹՈՒՅԱՆ արդյունք 2	Կիրառել ղեկավարման Էթիկայի և գործարար հարաբերությունների վարվելակերպի կանոնները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ծառայությունների ղեկավարման Էթիկայի սկզբունքները, 2) ներկայացնում է հյուրանոցային ծառայությունների աշխատակիցների վարվեցողության կանոնները, 3) ճիշտ է ներկայացնում հյուրանոցային ծառայությունների աշխատողների աշխատանքային կուլտուրային հետևելու ձևը, 4) կարողանում է բարեկիրթ ոճով վարել զրույց՝ դրսևորելով խոսքի կուլտուրա, գրագիտություն, ճիշտ տոն:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել ղեկավարման Էթիկայի և հյուրանոցային ծառայությունների աշխատակիցների վարվեցողության կանոնները: Դերային խաղի միջոցով հյուրանոցային ծառայողների միջև կառաջադրվի իրավիճակ, որի շրջանակներում տարբեր գործառնություններ իրականացնող աշխատակիցները պետք է համատեղ ջանքերով կատարեն աշխատանքային պարտականություն՝ պահպանելով վարվեցողության կանոնները: Յուրաքանչյուր պայմանական աշխատակից պարտավոր է պահպանել բարեկիրթ աշխատանքը և ճանաչի պարտականությունների համաչափությունը:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - ծառայությունների ղեկավարման Էթիկայի սկզբունքները, - հյուրանոցային ծառայությունների աշխատակիցների վարվեցողության կանոնները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՈՒՏՈՒՄՆԱԹՈՒՅԱՆ արդյունք 3	Ներկայացնել մասնագիտական Էթիկայի և սպասարկման հոգեբանության հիմունքներն ու սկզբունքները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է նկարագրել հյուրերի հոգեբանական հիմնական տեսակները և շփման հոգեբանական հիմունքներն ու սկզբունքները, 2) կարողանում է որոշել հաճախորդի հոգեբանական տեսակը, 3) կարողանում է ներկայացնել մասնագիտական Էթիկայի և սպասարկման հոգեբանության հիմունքներն ու սկզբունքները, 4) կարողանում է բացատրել սպասարկման կուլտուրան՝ որպես հյուրանոցային գործի անբաժան մաս:

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել անձի հոգեբանական հիմնական տեսակները, շփման հոգեբանական սկզբունքները, մասնագիտական հոգեբանության առանձնահատկությունները: Կառաջադրվի պայմանական հաճախորդի օրինակով որոշել նրա հոգեբանական տեսակը և դրան համապատասխան կողմնորոշվել շփման ձևի մեջ՝ պահպանելով մասնագիտական էթիկան: Առաջադրված իրավիճակի օրինակով կհանձնարարվի հիմնավորել սպասարկման կուլտուրայի առկայության կարևորությունը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - հաճախորդի հոգեբանական տեսակը, - մասնագիտական էթիկայի և սպասարկման հոգեբանության հիմունքներն ու սկզբունքները, - սպասարկման կուլտուրան որպես հյուրանոցային գործի անբաժան մաս: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել հյուրանոցի աշխատողի արտաքին տեսքին ներկայացվող պահանջները, անձնակազմի համազգեստը կրելու կանոնները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ներկայացնել հյուրանոցի աշխատողի արտաքին տեսքին ներկայացվող պահանջները, 2) կարողանում է ներկայացնել նորաձևության պահանջները և ազգային ոճի համադրման սկզբունքները համազգեստ (այդ թվում՝ կոշիկների) պատվիրելու և կրելու ժամանակ, 3) կարողանում է հետևել աշխատանքի վայրում դիմահարդարմանը, սանրվածքին, ինչպես նաև ձեռքերի խնամքին ներկայացվող պահանջները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի հյուրանոցային տարբեր ծառայություններ մատուցող հիմնական աշխատակիցների օրինակով նկարագրել յուրաքանչյուրի արտաքին տեսքին ներկայացվող պահանջները (հագուստի, սանրվածքի, կոշիկների, դիմահարդարման, անձնական հիգիենայի և ձեռքերի խնամքի վերաբերյալ): Կառաջադրվի որոշակի առանձնահատկություն ունեցող հյուրանոցի պայմաններում առաջարկել համապատասխան արտաքին տեսք և ոճ:</p>

	<p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>- հյուրանոցի աշխատողի արտաքին տեսքին ներկայացվող պահանջները, անձնակազմի համագգեստը կրելու կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ստեղծել հյուրընկալության մթնոլորտ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է նկարագրել հյուրանոցում հյուրընկալության մթնոլորտի գաղափարը և հյուրերի նկատմամբ ուշադրություն դրսևորելու ձևերը, 2) կարողանում է ցուցադրել հյուրընկալության մթնոլորտը արտացոլող վերաբերմունքը հաճախորդների նկատմամբ, 3) կարողանում է նկարագրել տարբեր ազգերի և կրոնների ներկայացուցիչների սպասարկման առանձնահատկությունները, 4) կարողանում է նկարագրել հյուրանոցային միջազգային էթիկետի հիմնական դրույթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով:</p> <p>Դերային խաղի միջոցով ուսանողին կհանձնարարվի առնվազն 3 առանձնահատկություններ ունեցող հաճախորդների օրինակով նկարագրել հյուրընկալության հիմնական պայմանները, սպասարկել հյուրերին՝ ապահովելով հյուրընկալության դրական մթնոլորտ:</p> <p>Որպես առանձնահատկություն կարող է համարվել ազգությունը, դավանանքը, տարիքը, սովորույթները, հաշմանդամությունը և այլն:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <p>- հյուրանոցում հյուրընկալության մթնոլորտի գաղափարը և հյուրերի նկատմամբ ուշադրություն դրսևորելու ձևերը,</p> <p>- հյուրանոցային միջազգային էթիկետի հիմնական դրույթները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման	տեսական ուսուցում՝ 4 ժամ

Երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Կառավարել Էթիկական կոնֆլիկտների և տարբեր հոգեվիճակների ու զգացմունքների դրսևորումները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է սպասարկման գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, 2) ներկայացնում է խմբի ղեկավարի և լիդերի տարբերությունները, հեղինակության միջոցով Էթիկական կոնֆլիկտները լուծելու մեխանիզմները, 3) ցուցադրում է անձնական օրինակով ներգործելու օրինակներ, 4) ցուցադրում է հոգատար վերաբերմունքով և ուշադրություն դարձնելու եղանակով աշխատողի մոտ այլ հոգեբանական իրավիճակներ ձևավորելու օրինակներ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով:</p> <p>Դերային խաղի միջոցով ուսանողին կհանձնարարվի կանխել առնվազն 3 տարբեր աշխատանքային կոնֆլիկտների հավանականությունը՝ այն փոխակերպելով դրացիական մթնոլորտի, հանդուրժողականության: Որպես աշխատակցի բացասական տրամադրվածության վրա ազդելու օրինակ կարող է կիրառվել անձնական հեղինակությունը, փոխըմբռնումը, սաստումը և այլն):</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - սպասարկման գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, - խմբի ղեկավարի և լիդերի տարբերությունները, հեղինակության միջոցով Էթիկական կոնֆլիկտները լուծելու մեխանիզմները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՍԿՀԶՀ-5-16-013
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել գործարար հաղորդակցություն կազմակերպելու և դրանցում մասնակցելու ունակություններ, զարգացնել աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ և բանակցություններ անցկացնելու, ինչպես նաև բանակցություններ, դեբատներ և

	գործարքներ կնքելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 52 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնառած լինի ՍԿՅԶԳ-5-16-007 «Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ» մոդուլը
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) Ներկայացնի գործարար հաղորդակցության տարատեսակները և դրանց ազդեցությունը, 2) Փնտրի և ընտրի գործընկեր, 3) Անցկացնի հանդիպումներ և քննարկումներ, 4) Վարի գործածար բանակցություններ, 5) Վերլուծի ժեստերը գործարար հաղորդակցության ժամանակ, 6) Համագործակցի և կնքի գործարքներ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գործարար հաղորդակցության տարատեսակները և դրանց ազդեցությունը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Ներկայացնում է գործարար հաղորդակցության տարատեսակները, բաղադրիչները, 2) Նկարագրում է գործարար հաղորդակցության էությունն ու ազդեցությունը կազմակերպության հաջողության գործում, 3) Ներկայացնում է գործարար հաղորդակցման տարատեսակների կիրառման նպատակահարմարությունը՝ ըստ առաջադրված խնդրի կարգավորման:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել գործարար հաղորդակցման տարատեսակները և բաղադրիչները: Կհանձնարարվի որոշակի գործնական իրավիճակ կամ խնդիր, որից ելնելով ուսանողը ընտրում է առավել նպատակահարմար հաղորդակցման տեսակը և հիմնավորում իր ընտրության արդյունավետությունը, ինչպես նաև գործարար հաղորդակցման ազդեցությունը կազմակերպության խնդիրների լուծման գործում:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>- գործարար հաղորդակցության տարատեսակները, բաղադրիչները,</p>

	- գործարար հաղորդակցության Էությունն ու ազդեցությունը կազմակերպության հաջողության գործում: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Փնտրել և ընտրել գործընկեր
Կատարման չափանիշներ	1) կարողանում է ներկայացնել պատվիրատու, սպասարկող և մատակարարող կազմակերպությունների որոնման եղանակները, 2) կայացնում է ճիշտ որոշում առավել նախընտրելի կազմակերպության ընտրության վերաբերյալ, 3) վերլուծում և գնահատում է ընտրված կազմակերպության առավելությունները մյուսների համեմատ (այլընտրանքի գինը):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ստեղծել պայմանական իրավիճակ, որն ապահովելու համար անհրաժեշտ է գտնել կոնկրետ գործընկերների՝ ընտրություն կատարելու ժամանակ առաջնորդվելով գործարար շահերից: Կառաջադրվի ուսանողին հիմնավորել այլընտրանքի հնարավորություններից (առնվազն 3 տարբերակ) իր ընտրության նպատակահարմարությունը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - պատվիրատու, սպասարկող և մատակարարող կազմակերպությունների որոնման եղանակները, - ընտրված կազմակերպության առավելությունները մյուսների համեմատ (այլընտրանքի գինը): Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության	Անցկացնել հանդիպումներ և քննարկումներ

արդյունք 3	
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ անցկացնելու փուլերը,</p> <p>2) կազմակերպում և անցկացնում է աշխատանքային հանդիպում,</p> <p>3) ներկայացնում է շահառուների հետ գործնական հանդիպումներ և քննարկումներ անցկացնելու փուլերը,</p> <p>4) կազմակերպում և անցկացնում է գործնական հանդիպումներ,</p> <p>5) ներկայացնում է աշխատակիցների և շահառու կողմերի հետ հանդիպումներ և քննարկումներ անցկացնելու տարբերություններն ու ընդհանրությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի պայմանական թեմայի շուրջ կազմակերպել և անցկացնել աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ շահառու կողմերի հետ՝ ապահովելով փուլային հաջորդականությունը: Նույն առաջադրանքը կհանձնարարվի կատարել աշխատակիցների հետ:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ անցկացնելու փուլերը, - շահառուների հետ գործնական հանդիպումներ և քննարկումներ անցկացնելու փուլերը. - գործնական հանդիպումները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Վարել գործածար բանակցություններ</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է գործարար բանակցությունների նախապատրաստման մեթոդները հանդիպման վայրի և ժամանակի ճշգրտմամբ,</p> <p>2) ներկայացնում է գործարար բանակցությունների վարման տեխնիկան և կառուցվածքը,</p> <p>3) ներկայացնում է գրուցակցի հնարավոր դիրքորոշումները՝ վերևից, ներքևից, հավասարը հավասարի,</p> <p>4) վարում է գործարար բանակցություններ,</p>

	5) գործարար բանակցությունների ընթացքում կիրառում է դեբատի տեխնոլոգիան:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի առաջադրել պայմանական խնդիր և դրա շուրջ նախաձեռնել և վարել առնվազն 3 տարբեր բնույթի գործարար բանակցություն՝ պահպանելով կազմակերպման և անցկացման տեխնիկական և էթիկական պայմանները: Կառաջադրվի բանակցություններում կիրառել դեբատի տեխնոլոգիան: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝ - գործարար բանակցությունների վարման տեխնիկական և կառուցվածքը, - գործարար բանակցությունների վարումը, - գործարար բանակցությունների ընթացքում դեբատի տեխնոլոգիան: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյուբեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Վերլուծել ժեստերը գործարար հաղորդակցության ժամանակ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հնարավոր ժեստերը գործարար հանդիպումների ժամանակ, 2) ներկայացնում է դրական և բացասական տպավորություն արտահայտող ժեստերը, 3) վերլուծում է գրուցակցի վերաբերմունքն ըստ գործածվող ժեստերի:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի առաջադրել պայմանական խնդիր և դրա շուրջ բանակցությունների ընթացքում ըստ գրուցի տրամաբանության կիրառել առնվազն 5 տարբեր ժեստեր, կողմնորոշվել գրուցակցի վարքագծի և տրամադրվածության մեջ՝ ճանաչելով և մեկնաբանելով նրա օգտագործած ժեստերը: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - հնարավոր ժեստերը գործարար հանդիպումների ժամանակ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում

	կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյուբեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Համագործակցել և կնքել գործարքներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կազմակերպությունների հետ համագործակցության իրականացման ընթացքը, 2) ներկայացնում է գործարքների կնքման (պայմանագրերի) կարգը, 3) սահմանում է գործարքների (կնքվող պայմանագրի) կատարման ժամկետը, 4) որոշարկում է առաջադրված իրավիճակում համագործակցող կազմակերպությունների պարտավորություններն ու իրավունքները, 5) սահմանում է պայմանագրի առաջադրված կետերի խախտման դեպքում կողմերի պատավորությունները հաշվի առնելով գործող օրենսգիրքը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կառաջադրվի երկու տարբեր պայմանական կազմակերպությունների համար ստեղծել համագործակցության հիմքեր և նախապարաստել գործարքի կնքման աշխատանքները և նախնական տեղեկությունների հիման վրա կազմում և կնքում պայմանագիր: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել պայմանագրային կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պայմանագրային կետերի խախտման դեպքում պատահասանատվությունները:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - գործարքների կնքման (պայմանագրերի) կարգը, - գործարքների (կնքվող պայմանագրի) կատարման ժամկետը, - պայմանագրի առաջադրված կետերի խախտման դեպքում կողմերի պատավորությունները՝ հաշվի առնելով գործող օրենսգիրքը: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյուբեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման	տեսական ուսուցում՝ 4 ժամ

Երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԹՐԵՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՁԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՍԿՀԶՀ-5-16-014
Մոդուլի նպատակը	Սովորողին տալ գիտելիքներ կոնֆլիկտների, փոփոխությունների ու սթրեսների հիմնական ձևերի և զարգացման փուլերի վերաբերյալ, զարգացնել ծագած կոնֆլիկտները, սթրեսները և փոփոխությունները կառավարելու և հաղթահարելու կարողությունները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 28 ժամ գործնական աշխատանք՝ 44 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնառած լինի ՍԿՀԶՀ-5-16-007 «Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ», ՍԿՀԶՀ-5-11-012 «Ղեկավարման հմտություն, հոգեբանություն և հյուրընկալության էթիկետ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի կոնֆլիկտների էությունը և պատճառները, 2) ներկայացնի կոնֆլիկտների հիմնական ձևերը և զարգացման փուլերը, 3) նկարագրի միջանձնային կոնֆլիկտների կառավարման ոճերը, 4) կառավարի դիմադրության հաղթահարումը՝ փոփոխությունների ներդրման ժամանակ, 5) կառավարի սթրեսը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կոնֆլիկտների էությունը և պատճառները
Կատարման չափանիշներ	1) նկարագրում է կոնֆլիկտի էությունն ու դրա ազդեցությունը կազմակերպության աշխատանքների խոչընդոտման գործում, 2) ներկայացնում է կոնֆլիկտների ծագման պատճառները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կառաջադրվի նկարագրել կոնֆլիկտի էությունն ու ծագման պատճառները: Կառաջադրվի որոշակի պայմանական կոնֆլիկտային իրավիճակ, որից ելնելով ուսանողին կհանձնարարվի հիմնավորել դրա ազդեցությունը կազմակերպության աշխատակիցների հարաբերությունների և ընդհանուր աշխատանքների վրա:

	<p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - կոնֆլիկտի էությունն ու դրա ազդեցությունը կազմակերպության աշխատանքների խոչընդոտման գործում, - կոնֆլիկտների ծագման պատճառները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կոնֆլիկտների հիմնական ձևերը և զարգացման փուլերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տարբերակում է կոնֆլիկտի դասակարգման ներանձնային ձևը, 2) տարբերակում է կոնֆլիկտների դասակարգման միջանձնային ձևը, 3) տարբերակում է կոնֆլիկտները անձի և խմբի միջև, 4) տարբերակում է կոնֆլիկտները հաճախորդ և կազմակերպության միջև, 5) տարբերակում է կոնֆլիկտները հաճախորդ և անձնակազմի միջև, 6) տարբերակում է կոնֆլիկտների դասակարգման միջխմբային ձևը, 7) ներկայացնում է կոնֆլիկտների զարգացման փուլերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել կոնֆլիկտների ձևերը ըստ դասակարգումների և զարգացման փուլերի: Կառաջադրվի առնվազն 3 պայմանական կոնֆլիկտային իրավիճակ, որի դիտարկումից կամ նկարագրությունից ելնելով ուսանողը տարբերակում է կոնֆլիկտների ձևերը և բացատրում տվյալ իրավիճակի համար կոնֆլիկտի զարգացման փուլերը:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - կոնֆլիկտի դասակարգման ներանձնային ձևը, - կոնֆլիկտների դասակարգման միջանձնային ձևը, - կոնֆլիկտները անձի և խմբի միջև, - կոնֆլիկտները հաճախորդ և անձնակազմի միջև,

	<p>- կոնֆլիկտների զարգացման փուլերը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Նկարագրել միջանձնային կոնֆլիկտների կառավարման ոճերը</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կառավարում է կոնֆլիկտը՝ վերջինից խուսափելու միջոցով, 2) կառավարում է կոնֆլիկտը համագործակցելով, 3) կառավարում է կոնֆլիկտը համահարթեցմամբ, 4) կառավարում է կոնֆլիկտը կամային ուժի կամ հարկադրանքի միջոցով, 5) կառավարում է կոնֆլիկտը փոխզիջման միջոցով, 6) կառավարում է կոնֆլիկտը բուն խնդրի լուծման միջոցով:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել կոնֆլիկտների կառավարման ոճերը (տարբերակները): Կառաջադրվի առնվազն 3 պայմանական կոնֆլիկտային իրավիճակ, որի դիտարկումից կամ նկարագրությունից ելնելով ուսանողն ընտրում և կիրառում է կոնֆլիկտների կառավարման իր տարբերակները և բացատրում տվյալ իրավիճակի համար կոնֆլիկտի կառավարման ընտրված ոճի նպատակահարմարությունը:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ՝</p> <ul style="list-style-type: none"> - կոնֆլիկտը՝ համագործակցելով, - կոնֆլիկտը համահարթեցմամբ, - կոնֆլիկտը կամային ուժի կամ հարկադրանքի միջոցով, - կոնֆլիկտը փոխզիջման միջոցով, <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյուբեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կառավարել դիմադրության հաղթահարումը՝ փոփոխությունների ներդրման ժամանակ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կառավարում է փոփոխությունները՝ ապահովելով ճշգրիտ տեղեկատվություն, 2) կառավարում է փոփոխությունները բանակցությունների միջոցով, 3) կառավարում է փոփոխությունները՝ ապահովելով աշխատակիցների մասնակցությունը, 4) կառավարում է փոփոխությունները՝ խրախուսելով աշխատակիցներին, 5) կառավարում է փոփոխությունները՝ կիրառելով հարկադրանք:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել աշխատանքային իրավիճակների փոփոխության (օրինակ՝ նորամուծությունների դեպքում) ժամանակ հնարավոր դիմադրությունների կառավարման տարբերակները: Կառաջադրվի առնվազն 3 պայմանական փոփոխությունների դիմադրության իրավիճակ որի դիտարկումից կամ նկարագրությունից ելնելով ուսանող ընտրում և կիրառում է դիմադրությունների կառավարման իր տարբերակները և բացատրում տվյալ իրավիճակի համար փոփոխությունների կառավարման ընտրված տարբերակի նպատակահարմարությունը:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - փոփոխությունները բանակցությունների միջոցով, - փոփոխությունները՝ խրախուսելով աշխատակիցներին, - փոփոխությունները՝ կիրառելով հարկադրանք, <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյուբեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ

Ժամաքանակը	
Ուսումնառության արդյունք 5	Կառավարել սթրեսը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կառավարում է սթրեսը՝ իմանալով դրա ծագման պատճառը, 2) կառավարում է սթրեսը՝ վերջինիս տեսակները ճանաչելով, 3) կառավարում է սթրեսը՝ սթրեսածին գործոնները ճանաչելով, 4) կառավարում է սթրեսը՝ աշխատակիցների մասնակցությամբ լիցքաթափման որոշակի միջոցառումներ ձեռնարկելով:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի, գործնական առաջադրանքների և դերային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել սթրեսի առաջացման պատճառները, տեսակները և սթրեսածին գործոնները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում կհանձնարարվի ուսանողին ճանաչել սթրեսածին պատճառը և դրա տեսակը, պայմանական իրավիճակից (դիտարկելով կամ նկարագրությունից ելնելով) ընտրել տվյալ սթրեսի կառավարման իր տարբերակները և բացատրել տվյալ իրավիճակի համար ընտրված կառավարման տարբերակի նպատակահարմարությունը:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - սթրեսը, դրա ծագման պատճառը, - սթրեսը, սթրեսածին գործոնները, - սթրեսն աշխատակիցների մասնակցությամբ, լիցքաթափման որոշակի միջոցառումներ: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կյութեր, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՇՎԱԴՊԱՀԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՍԿՀԶՀ-5-16-015
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել կարողություններ հաշվապահական հաշվառման վարման, հաշվետվությունների լրացման և վերլուծության վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝

	տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնառած լինի ՍԿՅԶԳ-5-16-007 «Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) բնութագրի հաշվապահական հաշվառումն, որպես տեղեկատվական և որոշումների կայացմանն աջակցող համակարգ, 2) իմանա ՅՅ օրենքը «հաշվապահական հաշվառման» մասին, 3) իմանա հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների հաշվետվությունը, 4) իրականացնի հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման գործառույթները, 5) օգտվի հաշվապահական հաշիվների հաշվային պլանից, 6) իմանա հաշվապահական փաստաթղթերը և գրանցամատյանները, 7) իրականացնի ակտիվների և պարտավորությունների գույքագրում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնութագրել հաշվապահական հաշվառումն որպես տեղեկատվական և որոշումների կայացմանն աջակցող համակարգ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման խնդիրներն ու նպատակը, 2) ճիշտ է բնորոշում հաշվապահական հաշվառման տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգը, 3) ճիշտ է բնորոշում հաշվապահական հաշվառման ներքին և արտաքին օգտագործողներին:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու հաշվապահական հաշվառման տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգեր: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են ամեն մի կոնկրետ իրավիճակում ուսանողի կարողությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ <ul style="list-style-type: none"> - հաշվապահական հաշվառման խնդիրներն ու նպատակը, - հաշվապահական հաշվառման ներքին և արտաքին օգտագործողները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր,

ռեսուրսները	ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ ՅՅ օրենքը «Հաշվապահական հաշվառման» մասին
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գիտի օրենքների գործողության ոլորտը, 2) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման կարգավորումը, ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը, 3) ճիշտ է ներկայացնում ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները, 4) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը, 5) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական խախտումների պատասխանատվությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային և գործնական հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու ՅՅ օրենքը «Հաշվապահական հաշվառման» մասին, ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները, - հաշվապահական հաշվառման կազմակերպումը և վարումը, - հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական խախտումների պատասխանատվությունը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների հաշվետվությունը

Կատարման չափանիշներ	1) գիտի կազմակերպության ակտիվները պարտավորությունները և կապիտալը, 2) գիտի հաշվապահական հաշվեկշռի բաժինները, 3) գիտի տնտեսական գործառնությունների հետևանքով հաշվապահական հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունները, 4) գիտի հաշվապահական հաշվեկշռի ֆունկցիաները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային և գործնական հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին առաջադրանքներ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները` - կազմակերպության ակտիվները պարտավորությունները և կապիտալը, - տնտեսական գործառնությունների հետևանքով հաշվապահական հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունները, - հաշվապահական հաշվեկշռի ֆունկցիաները: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Իրականացնել հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման գործառնությունները
Կատարման չափանիշներ	1) տարբերակում է ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվները, 2) գիտի կրկնակի գրանցման կարևորագույն գործառնությունները հաշվապահական հաշվառման համակարգում, 3) ճիշտ է ձևակերպում տնտեսական գործառնությունների հաշվային թղթակցությունները, 4) ճիշտ է կատարում կրկնակի գրանցում հաշվապահական հաշիվներում, 5) ճիշտ է որոշում հաշվապահական հաշիվների մնացորդները և հաշիվներով կազմում շրջանառության տեղեկագիրը, 6) ճիշտ է տարբերակում սինթետիկ և անալիտիկ հաշվառման համակարգերը, 7) ճիշտ է ամփոփում անալիտիկ հաշիվների մնացորդները և հանրագումարային արժեքով համադրում է համապատասխան սինթետիկ հաշվի մնացորդը,

	8) ճիշտ է կազմում սինթետիկ հաշիվների շրջանառության տեղեկագրի հիման վրա հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների հաշվետվություն:
Չնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման գործառնություններին վերաբերող առաջադրանքներ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները` - ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվները, - տնտեսական գործառնությունների հաշվային թղթակցությունները, - կրկնակի գրանցում հաշվապահական հաշիվներում, - սինթետիկ և անալիտիկ հաշվառման համակարգերը, Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Օգտվել հաշվապահական հաշիվների հաշվային պլանից
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, 2) ճիշտ է տարբերակում հաշվապահական հաշիվներն ըստ տնտեսական բովանդակության, դասերի, խմբերի, առաջին և երկրորդ կարգերի, 3) ճիշտ է օգտվում հաշվային պլանից և գիտի տնտեսական գործառնությունների հաշվապահական թղթակցությունները:
Չնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու հաշվապահական հաշիվների հաշվային պլանին վերաբերող առաջադրանքներ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները` - հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, - հաշվապահական հաշիվներն ըստ տնտեսական բովանդակության, դասերի, խմբերի, առաջին և երկրորդ կարգերի:

	Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական կյուբեր, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ հաշվապահական փաստաթղթերը և գրանցամատյանները
Կատարման չափանիշներ	1) գիտի հաշվապահական հաշվառման փաստաթղթերի դասակարգումը, 2) գիտի սկզբնական փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները, փաստաթղթերի ժամանակին և ամբողջական ձևակերպումը և հայտնաբերված սխալների ուղղման կարգը, 3) գիտի հաշվապահական հաշվառման գրանցամատյանների մասին, 4) գիտի փաստաթղթերի և գրանցամատյանների արխիվացման ձևերի մասին:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու հաշվապահական փաստաթղթերին և գրանցամատյաններին վերաբերող առաջադրանքներ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - սկզբնական փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները, փաստաթղթերի ժամանակին և ամբողջական ձևակերպումը և հայտնաբերված սխալների ուղղման կարգը, - փաստաթղթերի և գրանցամատյանների արխիվացման ձևերը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական կյուբեր, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ
Ուսումնառության	Իրականացնել ակտիվների և պարտավորությունների գույքագրում

արդյունք 7	
Կատարման չափանիշներ	<p>1) գիտի ակտիվների և պարտավորությունների գույքագրման դրդապատճառները,</p> <p>2) ճիշտ է բացատրում գույքագրման գործառույթները հաշվապահական հաշվառման տեղեկատվության արժանահավատության գնահատման ոլորտում,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում գույքագրման տեսակները և գույքագրման հանձնաժողովների ձևավորման սկզբունքները,</p> <p>4) ճիշտ է ամփոփում գույքագրման արդյունքները և կազմում գույքագրման «համեմատական տեղեկագրեր»,</p> <p>5) ճիշտ է ձևակերպում գույքագրման արդյունքները հաշվապահական համապատասխան թղթակցություններով:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային առաջադրանքների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու ակտիվների և պարտավորությունների գույքագրման մասին առաջադրանքներ:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - ակտիվների և պարտավորությունների գույքագրման դրդապատճառները, - գույքագրման տեսակները և գույքագրման հանձնաժողովների ձևավորման սկզբունքները, - գույքագրման արդյունքները հաշվապահական համապատասխան թղթակցություններով: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՍԿՀԶՀ-5-16-016
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ազգային, մշակութային և կրոնական առանձնահատկությունների վերաբերյալ ճանաչողական կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Մուտքային	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

պահանջները	
ՈՒՏՈՒՄՆԱԶՈՒԹՅԱՆ արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) իմանա և տարբերակի տարբեր ազգերի ազգային սովորույթները և դրանց առանձնահատկությունները, 2) իմանա և տարբերակի կրոնները և նրանց առանձնահատկությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒՏՈՒՄՆԱԶՈՒԹՅԱՆ արդյունք 1	Իմանալ և տարբերակել տարբեր ազգերի ազգային սովորույթները և դրանց առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տալիս էթնիկ ընդհանրությունների սահմանումը, 2) ճիշտ է ներկայացնում աշխարհի ժողովուրդների էթնիկ քարտեզը, 3) ճիշտ է ներկայացնում էթնոժողովրդական տարաբնակեցումը, 4) ճիշտ է ներկայացնում էթնոլեզվաբանական դասակարգումը, 5) ճիշտ է ներկայացնում պետության վերաբերմունքը իր տարածքում ապրող ազգային փոքրքմասնությունների լեզվի, մշակույթի, ազգային սովորույթների պահպանման և զարգացման հանդեպ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստային և գործնական հանձնարարությունների միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու տարբեր ազգերի ազգային սովորույթների վերաբերյալ առաջադրանքներ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են ուսանողի ամեն մի կոնկրետ իրավիճակում համապատասխան ղեկավարման ոճի վերլուծման և արդյունավետ օգտագործման կարողությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - էթնիկ ընդհանրությունների սահմանումը, - էթնոլեզվաբանական դասակարգումը, - պետության վերաբերմունքն իր տարածքում ապրող ազգային փոքրքմասնությունների լեզվի, մշակույթի, ազգային սովորույթների պահպանման և զարգացման հանդեպ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային և գործնական առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմաներ, բառարան, էլեկտրոնային ինֆորմացիոն բազաներ (ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութեր), տեխնիկական սարքեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ և տարբերակել կրոնները և նրանց առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տարբերակում հիմնական կրոնները և ներկայացնում դրանց առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում տարբեր կրոն դավանող մարդկանց մոտ ընդունված կրոնական ծեսերը, ծիսակատարությունները, 3) ճիշտ է ներկայացնում ազգային և կրոնական ծեսերի և ծիսակատարությունների փոխկապակցվածությունը, 4) ճիշտ է ներկայացնում կրոնական հանդուրժողականությունը, 5) ճիշտ է ներկայացնում պետության վերաբերմունքը կրոնների հանդեպ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Հարցաշարերում և թեստերում ընդգրկված են լինելու կրոնների և նրանց առանձնահատկությունների վերաբերյալ առաջադրանքներ: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - հիմնական կրոնները և ներկայացնում դրանց առանձնահատկությունները, - տարբեր կրոն դավանող մարդկանց մոտ ընդունված կրոնական ծեսերը, ծիսակատարությունները, - պետության վերաբերմունքը կրոնների հանդեպ: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին, թեստային առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ հարցաշարեր, թեստեր, ուսումնական, մեթոդական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, պաստառներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՅՈՒՐԱՆՑՆԵՐԻ ԵՎ ՉԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՍԿՀԶՀ-5-16-017
Մոդուլի նպատակը	Սովորողին ծանոթացնել հյուրանոցային գործի և զբոսաշրջության զարգացման պատմական փուլերին, դրանց ազդեցությանը ժամանակակից հյուրանոցային բիզնեսի վրա, ձևավորել գիտելիքներ հյուրանոցային գործի և զբոսաշրջության կազմակերպման իրավական հիմքերի, հյուրանոցային հիմնական, օժանդակ և լրացուցիչ ծառայությունների վերաբերյալ, զարգացնել դրանց

	մասնագիտական կիրառության կարողությունները:
Մոդուլի տևողությունը	140 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 58 ժամ գործնական աշխատանք՝ 82 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) տիրապետի հյուրանոցային գործի և զբոսաշրջության զարգացման պատմությանը և արդյունքներին, 2) տիրապետի հյուրանոցային գործի և զբոսաշրջության կազմակերպման իրավական հիմքերին, 3) ճանաչի հյուրանոցային տնտեսության օբյեկտների, այդ թվում՝ զբոսաշրջային համալիրների տեսակները և դասակարգումը, 4) ճանաչի հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների հիմնական ծառայությունները, 5) ճանաչի հյուրանոցային օժանդակ և լրացուցիչ ծառայությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել հյուրանոցային գործի և զբոսաշրջության զարգացման պատմությանը և արդյունքներին
Կատարման չափանիշներ	1) տիրապետում է հյուրանոցային գործի և զբոսաշրջության զարգացման փուլերի մասին գիտելիքներին, 2) ներկայացնում է հյուրանոցային գործի և զբոսաշրջային գործունեության հիմնական ընդհանրությունները և տարբերությունները՝ ըստ ժամանակագրության, 3) ներկայացնում է հյուրանոցային և զբոսաշրջային այլ ծառայությունները՝ ըստ ժամանակագրության և առանձնահատկությունների:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի, բանավոր և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվեն թեստային հարցեր հյուրանոցային գործի և զբոսաշրջության զարգացման փուլերի, ժամանակագրության վերաբերյալ, կառաջադրվի գործնական աշխատանք համեմատելու համար տարբեր ժամանակաշրջաններում հյուրանոցային և զբոսաշրջային ծառայությունները, նկարագրել հիմնական առանձնահատկությունները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - հյուրանոցային տնտեսության օբյեկտների, զբոսաշրջային համալիրների տեսակները և դասակարգումը, - հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների հիմնական ծառայությունները, - հյուրանոցային օժանդակ , լրացուցիչ ծառայությունները:

	Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարության արդյունքները, պատասխանում թեստային հարցերի 90 տոկոսին, հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմատիկ նյութեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տիրապետել հյուրանոցային գործի և զբոսաշրջության կազմակերպման իրավական հիմքերին
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է հյուրանոցային գործի և զբոսաշրջության կազմակերպումը կարգավորող իրավական ակտերը և դրանց հիմնական պահանջները, 2) ներկայացնում է հյուրանոցային ծառայություններ մատուցելու կանոնները, 3) ներկայացնում է անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերի պահանջները հյուրանոցում և զբոսաշրջային համալիրներում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի, բանավոր և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել հյուրանոցային և զբոսաշրջային ոլորտը կարգավորող իրավական ակտերի հիմնական պահանջները, հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում անվտանգության և սանիտարահիգիենիկ հիմնական նորմերը: Ուսանողին կհանձնարարվի որոշակի խմբի դերային խաղի միջոցով դիտարկել հյուրանոցային պայմանական ծառայության մատուցման գործընթացը և արձանագրել աշխատանքի ընթացքում նկատված թերացումներն ու սխալները՝ հիմք ընդունելով ծառայությունների մատուցման ընդունված կանոնները: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - հյուրանոցային ծառայություններ մատուցելու կանոնները, - անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերի պահանջները հյուրանոցում և զբոսաշրջային համալիրներում: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարության արդյունքները, պատասխանում թեստային հարցերի 90 տոկոսին, հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմատիկ նյութեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ

Ժամաքանակը	
ՈՒՍՈՒՄՆԱԶՈՒԹՅԱՆ արդյունք 3	Ճանաչել հյուրանոցային տնտեսության օբյեկտների, այդ թվում՝ զբոսաշրջային համալիրների տեսակները և դասակարգումը
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակները,</p> <p>2) տարբերակում է հյուրանոցային օբյեկտների տեսակները՝ ըստ ծառայությունների,</p> <p>3) ներկայացնում է հյուրանոցային համալիրների նյութատեխնիկական բազան՝ ըստ ծառայությունների,</p> <p>4) համեմատում է հյուրանոցային ծառայությունները տարբեր հյուրանոցային համալիրներում և գնահատում արդյունավետությունը,</p> <p>5) ներկայացնում է հյուրանոցային համալիրների դասակարգումը՝ ըստ բնութագրիչների (չափանիշների),</p> <p>6) ներկայացնում է հյուրանոցային համալիրների դասակարգումները, որպես որակավորման կարգի նախապայման,</p> <p>7) առաջարկում է տեղավորման և ինքնասպասարկմամբ գիշերակացի այլընտրանքային տարբերակներ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի, բանավոր և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակները, կառուցվածքը, մատուցվող ծառայությունները, որակական բնութագրիչները: Ուսանողին տրվում է զբոսաշրջային պահանջմունքի տիպային օրինակ և հանձնարարվում ներկայացնել դրանց բավարարման համար հյուրանոցային համալիր ծառայությունների ամենաարդյունավետ եղանակը, ինչպես նաև առաջարկել տեղավորման և ինքնասպասարկմամբ գիշերակացի այլընտրանքային տարբերակ:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - հյուրանոցային ծառայությունները տարբեր հյուրանոցային համալիրներում, - հյուրանոցային համալիրների դասակարգումը: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարության արդյունքները, պատասխանում թեստային հարցերի 90 տոկոսին, հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմատիկ նյութեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
ՈՒՍՈՒՄՆԱԶՈՒԹՅԱՆ արդյունք 4	Ճանաչել հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների հիմնական ծառայությունները
Կատարման	1) ներկայացնում է հյուրանոցի ամրագրման և գրանցման (հաշվառման) ծառայության հիմնական բաղադրիչները,

չափանիշներ	<p>2) ներկայացնում է հյուրանոցի հաշվառման և տեղավորման ծառայության հիմնական բաղադրիչները,</p> <p>3) ներկայացնում է համարի սպասարկման ծառայության հիմնական բաղադրիչները,</p> <p>4) ներկայացնում է սպասարկման տարածքների շահագործման բաղադրիչները,</p> <p>5) ներկայացնում է սննդի սպասարկման ծառայության հիմնական բաղադրիչները,</p> <p>6) ներկայացնում է հյուրանոցի և զբոսաշրջային համալիրի անվտանգության համակարգի հիմնական բաղադրիչները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել հյուրանոցի ամրագրման, գրանցման, հաշվառման, տեղավորման, համարի սպասարկման, սննդի սպասարկման, սպասարկման տարածքների շահագործման ծառայությունները, հյուրանոցի և զբոսաշրջային համալիրի անվտանգության համակարգի հիմնական բաղադրիչները:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները`</p> <ul style="list-style-type: none"> - հյուրանոցի ամրագրման և գրանցման (հաշվառման) ծառայության հիմնական բաղադրիչները, - սննդի սպասարկման ծառայության հիմնական բաղադրիչները, - հյուրանոցի և զբոսաշրջային համալիրի անվտանգության համակարգի հիմնական բաղադրիչները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարության արդյունքները, պատասխանում թեստային հարցերի 90 տոկոսին, հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմատիկ նյութեր, իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում` 10 ժամ</p> <p>գործնական աշխատանք` 18 ժամ</p>
Ուսումնառության արդյունք5	<p>Ճանաչել հյուրանոցային օժանդակ և լրացուցիչ ծառայությունները</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է հյուրանոցային օժանդակ ծառայությունները և դրանց դերը,</p> <p>2) կապակցում է օժանդակ ծառայությունները հիմնական ծառայությունների հետ,</p> <p>3) կատարում է հիմնական և օժանդակ ծառայությունների փոխլրացման գործողություն,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հյուրանոցային լրացուցիչ ծառայությունները և դրանց տնտեսական հետևանքը,</p> <p>5) կարողանում է առաջարկել լրացուցիչ ծառայություն:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել</p>

	<p>հյուրանոցային օժանդակ ծառայությունները և լրացուցիչ ծառայությունները: Որպես օժանդակ ծառայություն կարող են հանդիսանալ՝ հանգստի և ժամանցի, վերարտադրողականության, անձնական խնամքի, հեռահաղորդակցության միջոցների (հնարավորության) տրամադրման և այլ ծառայությունները, իսկ որպես լրացուցիչ ծառայություն կարող է հանդիսանալ համագործակցող կազմակերպությունների կողմից առաջարկվող փոխադրման, սննդի, էքսկուրսիոն, ժամանցային և այլ ծառայությունները: Ուսանողին տրվում է զբոսաշրջային պահանջմունքի տիպային օրինակ և հանձնարարվում ներկայացնել դրանց բավարարման համար հիմնական ծառայություններին փոխլրացնող օժանդակ ծառայություններ տրամադրելու տնտեսապես շահավետ եղանակներ, առաջարկել համապատասխան լրացուցիչ ծառայություններ:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - հյուրանոցային օժանդակ ծառայությունները, - հիմնական և օժանդակ ծառայությունների փոխլրացման գործողություն, - հյուրանոցային լրացուցիչ ծառայությունները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարության արդյունքները, պատասխանում թեստային հարցերի 90 տոկոսին, հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմատիկ նյութեր, իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՍԿՀԶՀ-5-16-018
Մոդուլի նպատակը	<p>Սովորողին տալ գիտելիքներ հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում հիմնական ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև ղեկավարել այդ գործընթացները կազմակերպելու միջոցառումները: Ավարտելով մոդուլը սովորողը կկարողանա կազմակերպել հաճախորդների ամրագրման, ընդունման և հաշվառման ծառայությունների գործընթացը, կկարողանա հաճախորդներին համապատասխան տեղեկություններ տրամադրել, կազմակերպել ծառայությունների ֆինանսական հաշվարկման և դուրսգրման գործընթացները, կազմակերպել համարային ֆոնդի (սենյակների) սպասարկման, սննդի սպասարկման ծառայության, անվտանգություն համակարգի շահագործման և հյուրանոցային համալիրի տեխնիկական սպասարկման աշխատանքները:</p>
Մոդուլի տևողությունը	200 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 56 ժամ

	գործնական աշխատանք՝ 144 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնառած լինի ՍԿՉԶԶ-5-16-007 «Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ», ՍԿՉԶԶ-5-16-017 «Հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների ճանաչողությունը» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) կազմակերպի հաճախորդի ամրագրման, ընդունման և հաշվառման ծառայությունը, 2) ապահովի հաճախորդներին մատչելի տեղեկությունների տրամադրումը, 3) կազմակերպի ծառայությունների ֆինանսական հաշվարկում և դուրսգրում, 4) կազմակերպի համարային ֆոնդի (սենյակների) սպասարկում, 5) կազմակերպի սննդի սպասարկման ծառայություն, 6) հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում ապահովի անվտանգություն համակարգի շահագործումը և սանիտարահիգիենիկ պայմանները, 7) կազմակերպի հյուրանոցների և զբոսաշրջային համալիրի տեխնիկական սպասարկումը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կազմակերպել հաճախորդի ամրագրման, ընդունման և հաշվառման ծառայությունը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կազմակերպում է (համակարգում է) հաճախորդի ամրագրման գործընթացը՝ պահպանելով ընթացակարգը, 2) կազմակերպում է (համակարգում է) հաճախորդի ընդունման և տեղավորման գործընթացը՝ պահպանելով էթիկայի նորմերը, 3) իրականացնում է հաճախորդների կարիքների հաշվառում՝ ապահովելով շփման կանոնները և բանակցային տարրերը, 4) կարող է կանխել հաճախորդի ընդունման և տեղավորման ընթացքում հնարավոր կոնֆլիկտները, 5) իրականացնում է հաճախորդների կարիքները բավարարող հրահանգավորում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել պայմանական հաճախորդների հեռավար ամրագրումը և անմիջական գրանցումը, կառաջադրվի կազմակերպել առնվազն 2 տարբեր կարիքներ և պայմաններ առաջադրող հաճախորդների ընդունման, տեղավորման, նրանցից յուրաքանչյուրի կարիքների հաշվառման և ձևավորված ինֆորմացիայի (պատվերի հայտի) փոխանցումը (հրահանգավորումը) համապատասխան պատասխանատուին՝ պահպանելով շփման կանոնները և գերծ մնալ կոնֆլիկտներից: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը դիտարկում և արձանագրում է էթիկայի կանոնների, շփման կուլտուրայի, բանակցության ընթացքի և կոնֆլիկտների կանխարգելման կարողությունները և դրանցում թույլ տրված բացթողումները:

	<p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - հաճախորդի ընդունման և տեղավորման գործընթացը, - հաճախորդի ընդունման և տեղավորման ընթացքում հնարավոր կոնֆլիկտները: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմատիկ նյութեր, իրավիճակային խնդիրներ, հյուրանոցային ընդունարանի և մասնագիտացված ծրագրերի մոդել:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 22 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Այսպիսով էլ հաճախորդներին մատչելի տեղեկությունների տրամադրումը</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տեղեկատվության տրամադրման վերաբերյալ իրավական ակտերին, 2) տիրապետում է հյուրանոցային ծառայությունների վերաբերյալ հիմնական տեղեկատվությանը, 3) տիրապետում է հաճախորդին լսելու և արձագանքնելու հմտությանը, 4) մատչելիորեն տրամադրում է տեղեկատվություն՝ հյուրանոցային ծառայությունների վերաբերյալ, 5) մատչելիորեն տալիս է խորհրդատվություն՝ հյուրանոցային ծառայություններից օգտվելու վերաբերյալ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել տեղեկատվության ազատության և գաղտնիք պարունակող տեղեկությունների տրամադրման իրավական կարգավորումները, ներկայացնում հյուրանոցային և զբոսաշրջային համալիրներում աշխատանքի ընթացքում հնարավոր սահմանափակ (գաղտնիք պարունակող) և տրամադրման ենթակա շուրջ 10 տեղեկություն: Կառաջադրվի պայմանական հյուրանոցի ծառայությունների սպասարկման պայմաններում լսել պայմանական հաճախորդին հետաքրքրող հարցերը, պատասխանել հարցադրումներին, մատչելիորեն տրամադրել իրենց ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, հաճախորդին տալ խորհրդատվություն՝ որոշակի ծառայությունից օգտվելու վերաբերյալ:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> - տեղեկատվություն՝ հյուրանոցային ծառայությունների վերաբերյալ, - խորհրդատվություն՝ հյուրանոցային ծառայություններից օգտվելու վերաբերյալ:

	Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմատիկ նյութեր, իրավիճակային խնդիրներ, տեղեկատվական և գովազդային նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կազմակերպել ծառայությունների ֆինանսական հաշվարկում և դուրսգրում
Կատարման չափանիշներ	1) տիրապետում է հյուրանոցային ծառայությունների գներին, 2) տիրապետում է հյուրանոցային ծառայությունների հաշվարկման կանոններին, ձևաչափերին, 3) համակարգում է հյուրանոցի ծառայություններից հաճախորդի օգտվելու վերաբերյալ տեղեկությունները, 4) կազմակերպում է վերջնահաշվարկի կազմման գործընթացը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը կատարվում է իրավիճակային հարցերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել հյուրանոցային ծառայությունների, դրանց շուկայական միջին գների, գնային տարբերությունների և հաշվարկման կանոններն ու ձևաչափերը: Ուսանողին կհանձնարարվի կատարել հաճախորդին մատուցված հյուրանոցային ծառայությունների գնի վերջնահաշվարկ. դրա համար ուսանողը թվարկում է այն աղբյուրները, որոնցից հավաքագրել է հաճախորդին մատուցված պայմանական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը և դրանք հավաքագրելու իր համար ամենաարդյունավետ եղանակը: Ծառայությունների և դրանց գնի վերաբերյալ տվյալները կարող է տրամադրել դասավանդողը կամ ուսանողը ինքնուրույն սահմանել դրանք: Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ - հյուրանոցի ծառայություններից հաճախորդի օգտվելու վերաբերյալ տեղեկությունները, - վերջնահաշվարկի կազմման գործընթացը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ներկայացնում հանձնարարությունը և հիմնականում կատարում է տրված առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված թեմատիկ նյութեր, իրավիճակային խնդիրներ, տեղեկատվական և գնագոյացման թերթեր, գովազդային նյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կազմակերպել համարային ֆոնդի (սենյակների) սպասարկում
